Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2023-2024 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
11-12 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայկական լեռնաշխարհի նշված դաշտերից որի՞ տեղական ժամանակն է ամենաշատը տարբերվում Երևանի ժամանակից
1. Երզնկայի 2. Ավարայրի 3. Կարնո 4. Մշո

2. Նշված քաղաքներից որու՞մ է արտանետվում առավել շատ ջերմոցային գազ
1. Արմավիր 2. Գորիս 3. Հրազդան 4. Գավառ

3. Ճանապարհորդը դուրս եկավ եկեղեցուց և միանգամից 90^0 թեքվեց աջ: Ի՞նչ ազիմուտով է նա շարժվում այժմ
1. 0^0 2. 90^0 3. 180^0 4. 270^0

4. Ի՞նչն է առավել բնորոշ ֆավել և գետտո եզրույթներով բնորոշվող տարածքներին
1. թեթև արդյունաբերությունը 2. ոչ ֆորմալ տնտեսությունը
3. ծանր արդյունաբերությունը 4. բուսաբուծությունը

5. Նշված տարածաշրջաններից որու՞մ են բացակայում միապետությունները՝
1. Հարավարևելյան Ասիա 2. Հյուսիսային Աֆրիկա
3. Լատինական Ամերիկա 4. Հարավային Եվրոպա

6. Օվկիանոսներում խորջրյա հոսանքների առաջացման գլխավոր պատճառն է՝
1. ցունամին 2. ջրի աղիության և ջերմաստիճանների տարերությունները
3. քամին 4. գրավիտացիան

7. Ֆրախտով առաջատար երկիր է՝
1. Նորվեգիա 2. Կիպրոս
3. Պերու 4. Բանգլադեշ

8. Մակընթացային էլեկտրակայանների տեղակայման համար առավել բարենպաստ է՝
1. Գվինեական ծոցը 2. Պարսից ծոցը 3. Բենգալյան ծոցը 4. Ֆանդի ծոցը

9. Ամենաձերացող ազգն է՝
1. Գերմանացիներ
2. Ֆրանսիացիներ
3. Ճապոնացիներ
4. Կանադացիներ

10. Համաձայն Վեգենների տեսության՝ ո՞ր մայրցամաքում պետք է որոնել նույն ապարները, ինչ հանդիպում են Հարավային Ամերիկայի արևելքում
1. Անտարկտիդա 2. Աֆրիկա 3. Եվրասիա 4. Ավստրալիա

11. Համամոլորակային բնապահպանական հիմնախնդիրներից որի՞ լուծման ուղղությամբ է մարդկությունը գրանցել ամենամեծ առաջընթացը
1. անապատացում 2. օզոնի շերտ
3. կլիմայի փոփոխություն 4. կենսաբազմազանության կորուստ

12. Կենսատեխնոլոգիական կանաչ հեղափոխությունը, ի տարբերություն առաջին կանաչ հեղափոխության, որպես շահառու ընդգրկեց նաև՝
1. Աֆրիկյան երկրները 2. Մեքսիկան
3. Չինաստանը 4. Եվրոպական երկրները

13. **Տվյալ կլիմայագիրը ո՞ր բնակավայրին է բնորոշ**

1. Դելի 2. Պորտու Ալեգրի 3. Բրազավիլ 4. Լոնդոն



14. **Պողպատաձուլարանի տեղաբաշխման սխեմաներից ո՞րն է բնորոշ Ճապոնիային**

1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ



15. **Ինչերի՞ միջև սահման է հանդիսանում Բրանդտի գիծը**

1. զարգացած և զարգացող երկրների
2. կապիտալիստական և սոցիալիստական երկրների
3. հանրապետությունների և միապետությունների
4. դե ֆակտո և դե յուրե անկախ երկրների

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Ա երկրի բնակչության թիվը տարեսկզբին կազմել է 8մլն մարդ, իսկ տարեվերջին՝ 8,05մլն: Տարվա ընթացքում ներգաղթել է 20հզ մարդ, արտագաղթել է՝ 10հզ մարդ: Որքա՞ն է կազմել բնական աճի գործակիցը՝ արտահայտած պրոմիլներով:

17. Երկու քաղաքների միջև տեղական ժամանակի տարբերությունը կազմում է 32րոպե: Քանի՞ աստիճան հեռավորության վրա են միմյանցից գտնվում այդ քաղաքները:

18. Ա երկրի բնակչության թիվը 5մլն մարդ է: Տարեկան ամփոփիչ տվյալները ցույց են տալիս, որ ըստ տնտեսության ճյուղերի արտադրվել/մատուցվել են հետևյալ ծավալով նյութեր/ծառայություններ. գյուղատնտեսություն՝ 2մլրդ $; արդյունաբերություն՝ 20մլրդ $; տրանսպորտ և կապ՝ 5մլրդ $; ծառայությունների ոլորտ՝ 23մլրդ $: Քանի հազար $ է երկրում մեկ շնչին բաժին հասնող ՀՆԱ-ն:

19. Ա երկրում բնակչության թիվը 2մլն մարդ էր: Մեկ տարվա ընթացքում ներգաղթեց 30հզ մարդ և արտագաղթեց 10հզ մարդ: Հաշվել Ա երկրի միգրացիայի ինտենսիվության (շարժունակության) գործակիցը տոկոսով:

20. Ա երկիրն արտահանել է 50մլրդ $ գումարային արժողությամբ ապրանք և ներկրել է 40մլրդ $ գումարային արժողությամբ ապրանք: Նույն ժամանակահատվածում արտահանել է 10մլրդ $ և ներկրել է 20մլրդ $ գումարային արժողությամբ ծառայություն: Որքա՞ն է կազմել տվյալ երկրի առևտրային հաշվեկշիռը:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Ասատրյան**